Էդգար Էլբակյան
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետ, 3-րդ կուրս
Գիտ. ղեկ.՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ. գ. դ., պրոֆ. Ա. Մելքոնյան

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՀՀ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հայոց ցեղասպանությունը հայոց պատմության ամենաողբերգական էջն է: Եղեռնի մասին շատ է գրվել, խոսվել ու երգվել՝ պատմության այդ էջը դարձնելով հայ ժողովրդի գենետիկ հիշողության անքակտելի մասը: Մեծ եղեռնի հիմնահարցը, ըստ էության հայոց պատմագիտության համակարգում ցեղասպանագիտության սկիզբն է դրել: Ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը դարձել է Հայկական հարցի անքակտելի մասը, իսկ պատմական հուշը եղեռնի մասին 1960-ական թթ-ից ի վեր՝ սկիզբն է դրել Հայ ազգային զարթոնքի:

Այսպիսով, որքան էլ որ Մեծ եղեռնը ողբերգական էջ է հայոց պատմության մեջ, այնուամենայնիվ, պատմական հետագա իրադարձությունների վրա հիմնահարցի թողած ազդեցությունը բազմաշերտ է և ոչ միանշանակ, ուստի եղեռնի հիմնահարցի ուսումնասիրությունը նույնպես բազմաշերտ գիտական գործընթաց է:

Սույն ուսումնասիրության օբյեկտը Հայոց Մեծ եղեռնն է, ուսումնասիրության առարկան՝ եղեռնի հիմնահարցի սոցիալ-մշակութային, արժեքաբանական և քաղաքական գործառույթն է արդի պայմաններում: Ուսումնասիրության մեթոդները առավելապես պատմա-փիլիսոփայական և վերլուծական են: Ուսումնասիրության կիրառական նշանակությունը հայեցակարգային-ռազմավարական է, քանզի խնդիր է դրված՝ սահմանել ու եղեռնի հիմնահարցի տեղը ՀՀ ներքին և արտաքին քաղաքականության համատեքստում:

Ներքին քաղաքականության մեջ անհրաժեշտ է առանձնացնել երկու բաղադրիչ՝ կրթադաստիարակչական-քարոզչական և գիտաբանական:

Հանգամանքների բերումով ՀՀ-ում ծնվող և մեծացող հայ մանուկը բավականին վաղ տարիքից իմանում է թուրք ասկյարների կողմից սեփական ժողովրդի ողջակիզման մասին[1]: Այս առումով սոցիալականացման հանրակարգ են հանդիսանում ընտանիքը, դպրոցը, զանգվածային լրատվամիջոցները: Տեղեկությունները երբեմն կարող են հաղորդվել աղավաղված, պատմական եղելություններից տարբեր,

[1] Տողերիս հեղինակը Մեծ եղեռնի մասին իր ծնողներից լսել է տակավին 5 տարեկանում:

նույնիսկ կանխամտածված կերպով խեղաթյուրված: Օրինակ՝ ծնողը, կամենալով երեխայի մեջ սերմանել խաղաղասիրություն, այն հարցին, թե ինչ է եղել 1915 թ., կարող է տալ խիստ համառոտ և անբավարար պատասխան և վերջում նշելով, որ մեղավորը ոչ թե թուրք ժողովուրդն, այլ առանձին վերնախավային անհատներ, և որպես ապացույց կարող է բերել բազում օրինակներ, երբ թուրքերն ապաստան են տվել հայերին[1]: Առանձին ընտանիքներում Եղեռնի մասին պատմությունները կարող են ծայրահեղ հակառակ դրսևորումը ստանալ, և երեխայի մեջ դեռ մանուկ հասակից կարող է սերմանվել ատելություն և վրեժխնդրություն: Այս դեպքում պատմական փաստերը հիմնականում բերվում են ճշտորեն, սակայն շեշտը միակողմանիորեն և զգացմունքայնորեն դրվում է թուրք և քուրդ բաշիբոզուկների իրականացրած վայրագությունների վրա:

Այսպիսով, սոցիալականացման սուբյեկտ ընտանիքում նկատվում է շեղում օբյեկտիվիզմից, ինչն առաջին հերթին պայմանավորված է Եղեռնի՝ որպես պատմական էջի ողբերգականությամբ և թողած հետևանքները հաղթահարելու դժվարությամբ:

Օբյեկտիվ սոցիալականացման հանրակարգերն են ՁԼՄ-ները, այդ թվում՝ հեռուստատեսությունը, գիտահանրամատչելի նյութերը և ուսումնական հաստատությունները, առավելապես՝ դպրոցը: Այս մարմինների գործունեության հետևանքով՝ անկախության տարիներից ի վեր, իսկ առավել մեծ չափով՝ 1998 թ-ից սկսած Եղեռնի հարցը հանրության շրջանում ամենահայտնի պատմական էջն է, որի հետ

[1] Միանշանակ է, որ այսպիսի մոտեցումը չի համապատասխանում պատմական իրականությանը: Անուրանալի փաստ է, որ հայ և թուրք ժողովուրդների միջև կար և ցարդ կա նվաճողի և նվաճվածի, զավթիչի և տիրոջ, եկվորի և բնիկի անհաղթահարելի թշնամանք: Հասարակ ժողովրդի (türkler) շրջանում հակահայկականության չգոյության դեպքում չէր ձևավորվի Հայոց հարցը հայերի ոչնչացման միջոցով լուծելը որպես հավատամք դավանող քաղաքական վերնախավ և՝ հակառակը: Փիլիսոփայության մեջ սա կոչվում է համապատասխանության կամ անալոգիայի սկզբունք. «Այն, ինչ գտնվում է ներքևում համապատասխանում է նրան, ինչը գտնվում է վերևում և հակառակը» ("A Suggestive Inquiry into Hermetic Philosophy and Alchem" with introduction by **Isabelle de Steiger** http://en.wikipedia.org/wiki/Hermeticism#cite_note-21): Հիշյալը ապացուցելու համար բերենք մի վկայություն. «Թուրք կանանց ամբոխը, ճչալով, ծիծաղելով ու ոտքերով տրորելով այն ամենը, ինչ չէր կարող տանել իր հետ, թալանում էր կողմից սպանված հայի փոքր կրպակը» (**Կիրակոսյան Ա.**, Բրիտանական դիվանագիտությունը և արևմտահայության խնդիրը (XIX-րդ դարի 30-ական թթ. – 1914 թ.), Երևան, 1999, էջ 355): Նկատենք, որ խոսքը դեռևս 1896 թ. Պոլսո կոտորածների մասին է, և խոսք էլ չկա «առանձին վերնախավային անհատների մասին»: Ինչ վերաբերում է թուրքերի կողմից փրկված հայերի հարցին, ապա դա անժխտելի պատմական իրողություն է, սակայն միևնույն ժամանակ անժխտելի է, որ շատ հաճախ այդ գործողությունները կրում էին շահադիտական բնույթ, և «փրկված» հայերը, հատկապես՝ աղջիկները, հետագայում շահագործվում էին իրենց «փրկարարների» կողմից:

կարող է «մրցել» թերևս միայն Տիգրան Մեծի «Ծովից ծով Հայաստանը»: Հատկապես վերը նշված թվականից հետո, երբ պետական քաղաքականության մակարդակով Ցեղասպանության միջազգային ճանաչումը մտցվեց արտաքին քաղաքականության օրակարգ, մամուլը և հեռուստատեսությունն սկսեցին լայնորեն խոսել հարցի շուրջ. ամեն ապրիլի 24-ին պետական և մասնավոր հեռուստաընկերություններով կարելի էր տեսնել Եղեռնին վերաբերող փաստավավերագրական և գեղարվեստական տեսաշարեր, Արմին Վեգների դերզորյան նկարներ և այլն:

Կամա, թե ակամա ստեղծվեց մի հոգեբանական մթնոլորտ, որում Հայոց Մեծ եղեռնը թե՛ որպես պատմական փաստ, թե՛ որպես կայացած հիմնահարց վերածվեց ազգային ինքնության բաղադրիչի, դարձավ ամբողջ հայությանն առնչվող ու միավորող առաջնահերթ գործոն: Հիշյալ հոգեբանական մթնոլորտը շարքային հայերի և հատկապես նոր սերնդի մոտ ստեղծում է ազգային թերարժեքության բարդույթ, հայ տեսակը ընկալվում է որպես կոտորվող, թույլ, իսկ հայոց պատմությունը՝ որպես այդպիսի կոտորածների պարզագույն շղթա: Մեր փառապանծ հաղթանակներն այդ ամենի վրա վերածվում են մի վերջին հերոսական ճիգով նվաճված «բարոյական հաղթանակների»: Նման պարտվողական հոգեվիճակը հաճախ մեզնից աննկատ խոչընդոտում է մեր ազգային զարգացմանը: Ինչպես նշում է հայ ժողովրդի պատմության փիլիսոփայության ռահվիրաներից սպարապետ Նժդեհը. «Գիտական հոգեբանությունը» վաղուց է ապացուցել, որ աղետներ տեսած և մեծ արհավիրքների, ցնցումների ենթարկված ժողովուրդները, հատկապես փոքր ժողովուրդները, սկսում են տառապել հոգեկան ետընթացով, որն արտահայտվում է պարտվողականության տարբեր դրսևորումների ձևով: Աղետի ենթարկվածը, հոգեպես խիստ ուժասպառվելով, ամեն ինչ կորած է համարում. լքում է իր պատմական առաքելությունը, կրավորաբար և հնազանդորեն համակերպվում իր վզին փաթաթված քաղաքական ճակատագրին: Նախ և առաջ նրան պատում է թերարժեքության տանջալից զգացումը... Որպես «ուրացող» (պարտվողական), նա լքում է իր դիրքերը ողջ ճակատով: Իր գոյության պայքարը նա արտաքին ճակատից տեղափոխում է ներաշխարհը, որի հետևանքով ավելի է «կոտրվում», ուժասպառվում: Այսպիսով նա մոռացության է մատնում իրեն սպառնացող արտաքին վտանգը՝ թշնամուն: Միով բանիվ, նա անընդունակ է դառնում նոր պայքարի, ճիգի, զոհողության, դուրս ընկնում պատմության հունից և սկսում է քարշ

տալ իր անստեղծ ու անիմաստ գոյությունը՝ հարուցելով իր հանդեպ ազգերի *զզվանքն ու խղճահարությունը* (ընդգծումն իմն է – է.է.)»[1]:

Այսօր ՀՀ քաղաքացուն, հատկապես՝ մատաղ սերնդին անհրաժեշտ է տրամադիր լինել պայքարի բոլոր ճակատներում, քանզի 21-րդ դարի գոյապայմաններում պարտվողական տրամադրությունները ոչ մի դրական հետևանքի չեն հանգեցնի: Երիտասարդությանն ավելի ոգեշնչում է պետք, քան թևաթափում, հատկապես որ վերջինիս արդեն իսկ կան անբեկանելիորեն նպաստող գործոններ՝ քաղաքական սահմանների նեղություն, առկա բազմաթիվ հիմնախնդիրներ, սերնդեսերունդ փոխանցվող ցեղասպանվածի հոգեբանություն [2]: Ասվածն ամենևին չի ենթադրում հրաժարում եղեռնի իմացաբանական ճանաչողությունից, առավել ևս՝ ուրանալ եղեռնը: Խոսքն այստեղ հայոց պատմության փիլիսոփայության վերաիմաստավորման և շեշտը հաղթանակների, և ոչ թե պարտությունների վրա դնելու մասին է[3]:

Այժմ անդրադառնանք գիտաբանական բաղադրիչին: Հայ արդի պատմագիտության մեջ եղեռնի հիմնահարցը պետք է լինի մշտապես ուսումնասիրվող խնդիրների շարքում: Ցեղասպանագիտությունը, որպես քաղաքական պատմագիտության, աղբյուրագիտության, քաղաքագիտության, միջազգային իրավունքի, միջազգայնագիտու-թյան և դիվանագիտության հատման ոլորտում առաջացած ինքնուրույն գիտաճյուղ, պետք է ունենա իր ուրույն տեսական և կիրառական գործառույթները, որոնք պետք է սերտորեն փոխկապակցված լինեն. տեսական մակարդակով պետք է ամբողջացվեն եղեռնի մասին առկա գիտական նյութերը, հրատարակվեն նորանոր ուսումնասիրություններ, որոնք կպարզեն օսմանյան ցեղասպանական քաղաքականության ակունքներն ու պատճառները, թուրքական պետության հայատյաց քաղաքականությունը, իսկ այդ ամբողջ տեսական ընդհանրացումները պետք է որպես միջոց օգտագործվեն ՀՀ-ի արտաքին քաղաքականությունը վարելիս:

[1] **Նժդեհ Գ.**, Երկեր, հտ 2-րդ, Երևան 2002, էջ 441:

[2] Անգամ «ցեղասպանություն» եզրը, որ հրեա Ռաֆայել Լեմկինի հեղինակած «գենոցիդ» եզրի թարգմանությունն է, իր մեջ կրում է անընդունելի ձևակերպում, քանզի անուղղակիորեն մատնացույց է անում մեր տեսակի, մեր ցեղի սպանված լինելը կամ «սպանվելիությունը»:

[3] Անկախության շրջանում այս ուղղությամբ ուշագրավ աշխատություններ է հեղինակել պատմաբան **Արտակ Մովսիսյանը**՝ «Հնագույն պետությունը Հայաստանում» (Երևան, 1992), «Բարեպաշտ արքաների աշխարհակալությունը» (Երևան, 1997), «Սրբազան լեռնաշխարհը. Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում» (Երևան, 2004), «10 հայ ականավոր արքաներ» (Երևան, 2009), որոնք թե՛ պատմագիտական, թե՝ արժեքաբանական առումով նորույթ էին հայ իրականության մեջ:

Արդ անդրադառնանք եղեռնի հիմնահարցին ՀՀ արտաքին քաղաքականության համատեքստում: Ցեղասպանության հարցի հետապնդումը ՀՀ արտաքին օրակարգ է մտել դեռևս Անկախության հռչակագրի 11-րդ կետով: Սակայն 1991-1998 թթ-ին Ցեղասպանության հարցն այդպես էլ ՀՀ իշխանությունների կողմից բարձր ատյաններում չհարուցվեց: Առաջնային համարվեցին Թուրքիայի Հանրապետության հետ բնականոն հարաբերություններ հաստատելն ու բաց սահմաններ ունենալը[1]: Ցեղասպանության հարցում արտաքին քաղաքական կուրսը փոխվեց 1998 թ.: Ցեղասպանության միջազգային ճանաչումը և այդ հարցում Սփյուռքի ուժերի հետ համագործակցելը դարձան առաջնային[2]: Այսպիսով, անկախության տարիներին Ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում կան երկու արմատապես տարբեր ուղղություններ: Փորձենք առաջարկել մեր տարբերակը:

Պատմությունը ցույց է տվել, որ 1878 թ. Բեռլինի վեհաժողովի հետևանքով դառնալով միջազգային դիվանագիտության օբյեկտ՝ Հայոց հարցը մշտապես շահարկվել է մեծ պետությունների, այդ թվում՝ Օսմանյան կայսրության կողմից սեփական քաղաքական շահերին համապատասխան: Պատկերը չփոխվեց նաև 1915 թ. հետո, երբ Հայոց Մեծ եղեռնը դարձավ Հայոց հարցի անքակտելի մասը: Պատկերը, ցավոք, չի փոխվել նաև այսօր, երբ կա անկախ Հայաստանի Հանրապետություն: Միջազգային հարթակներում շարունակվում են Հայոց ցեղասպանության շուրջ ընթացող շահարկումները: Նման շահարկումները մի կողմից գալիս են՝ մեկ անգամ ևս ապացուցելու, որ առանձին պետություններ, առավելապես՝ աշխարհում եղանակ ստեղծողները, շարունակում են միջազգային հարաբերություններում ըստ իրենց հայեցողության օգտագործել Ցեղասպանության հարցը[3], մյուս կողմից՝ կրկին ու կրկին հիասթափության են մատնում մեծ պետությունների հետ հույսեր կապող հայորդիներին՝ զրկելով նրանց Հայոց հարցի արդարացի լուծման

[1] **Չաքրյան Հ.**, Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Երևան, 1998, էջ 11-13: 1991 թ. մարտի 15-ին Գերագույն խորհրդում ղեկավարներից Կ. Սարդարյանը հայտարարեց. «Պահանջատիրություն ասածը դատարկ բան է այսօր: Դա ձեռնտու է բոլոր այն ուժերին, որոնք դեմ են Հայաստանի անկախությանը» (Նույն տեղում, էջ 13):

[2] **Սաֆրաստյան Ռ.**, Հայաստան-Թուրքիա հարաբերությունների շուրջ, «Հանրապետական», թիվ 9 (73), 2009, էջ 9:

[3] Պատասխանելով տողերիս հեղինակի այն հարցին, թե ինչու ԱՄՆ չի ճանաչում Հայոց Ցեղասպանությունը և արդյոք մոտ ապագայում այդ հարցում հնարավոր է դրական տեղաշարժ՝ հօգուտ հայերիս՝ ՀՀ-ում ԱՄՆ Արտակարգ և լիազոր դեսպան **պն. Ջոն Հեֆֆերնը** բառացիորեն ասաց, որ Ցեղասպանության ճանաչումը չի մտնում ԱՄՆ արտաքին քաղաքականության հայեցակարգի մեջ, և ապագայում որևէ փոփոխություն տեղի չի ունենալու:

ապագա հեռանկարների նկատմամբ հավատից: Ուստի և գալիս ենք այն եզրահանգմանը, որ ՀՀ-ն ինքը պետք է տնօրինողը դառնա միջազգային ասպարեզում Ցեղասպանության հարցի «շահարկումներին»: Չպետք է մոռանալ, որ բարոյահոգեբանական գործոնից զատ՝ Հայոց պետականության ուժեղացմանը զուգահեռ ՀՀ արտաքին քաղաքականության ռազմավարության մեջ Ցեղասպանության հարցը առաջին հերթին կապվելու է պահանջատիրության, ասել է թե՝ փոխհատուցման պահանջի հետ՝ պատմաբարոյական հարթությունից տեղափոխվելով իրավաքաղաքականի: Անգամ այդ պահանջի չբավարարման դեպքում Ցեղասպանության հարցով միջազգային հարթակներում Թուրքիայի Հանրապետությանը «շանտաժի ենթարկելու» իրավունքը պետք է պատկանի բացառապես Հայաստանի Հանրապետությանը, որպեսզի Թուրքիայի Հանրապետության կողմից արվող համապատասխան զիջումները նույնպես արվեն ՀՀ օգտին[1]:

Ցավ ի սիրտ՝ այսօր Եղեռնի հիմնահարցը շաղկապում է աշխարհի տարբեր ծագերում ժամանակավորապես ծվարած և Հայաստանի Հանրապետությունում (ներառյալ նաև՝ Արցախում) և Ջավախքում բնակվող հայերին: Աշխարհաքաղաքական նոր իրողությունների պայմաններում ազգային ինքնության մյուս բաղադրիչները՝ լեզու, ազգային իդեալներ, պետականություն, դավանանք, զիջել են իրենց դիրքերը, ինչի պատճառը մասամբ նաև հայերիս՝ ցանկացած միջավայրին շատ արագ ընտելանալու, իսկ քաղաքական եզրով ասած՝ ինտեգրվելու հատկությունն է[2]: Այսպիսի պայմաններում Եղեռնի հարցը «իներցիա», իմա՞ պատմական հիշողության շնորհիվ՝ միակ հարցն է, որ կապում է հայության հայրենաբնակ և օտարաբնակ

[1] Կա ևս մեկ հանգամանք՝ ոչ պակաս ծանրակշիռ, որը պարտավորեցնում է ՀՀ հավասարակշռված քաղաքականություն վարել այս հարցում. խոսքը Թուրքիայի Հանրապետության տարածքում բնակվող հայերի մասին է՝ հայ համայնքի և իսլամացած կամ ծպտված հայերի: Միջազգային հարթակներում Ցեղասպանության հարցի շուրջ ընթացող ակտիվ քննարկումները և ոչ թուրքանպաստ որոշումներն ամեն անգամ բացասաբար են անդրադառնում Թուրքիայի հայության վրա, որոնք ՀՀ և հայության դիտակետից «տրոյական ձի» կարող են դառնալ Թուրքիայի համար:

[2] Այս առումով խիստ բնութագրական են հայերիս հասցեին Կանտի ասած խոսքերը. «... Մեկ այլ քրիստոնյա ժողովրդի՝ հայերի մոտ իշխում է ինչ-որ հատուկ տեսակի առևտրային ոգի, այն է՝ նրանք զբաղվում են փոխանակությամբ՝ ոտքով ճամփորդելով Չինաստանի սահմաններից մինչև Կորսոյի հրվանդանը Գվինեայի ափին. դա ցույց է տալիս այն բանիմաց և աշխատասեր ժողովրդի հատուկ ծագման մասին, որը հյուսիս-արևելքից մինչև հարավ-արևմուտք ուղղությամբ անցնում է գրեթե ողջ Հին աշխարհը և կարողանում *գրկաբաց ընդունելություն գտնել այն բոլոր ժողովուրդների կողմից, որոնց մոտ լինում են* (ընդգծումն իմն է – է.է.). դա ապացուցում է նրանց բնավորության (որի նախնական ձևավորումը մենք արդեն ի վիճակի չենք հետազոտել) գերազանցությունը ներկայիս հույների թեթևամիտ և ստորաքարշ բնավորության նկատմամբ: (http://nationalidea.am/print.php?id=68): Այս պարագայում դժվար է ասել՝ սա առավելություն է, թե թերություն:

հատվածներին, ուստի որպեսզի այդ վերջին միավորիչ թելն էլ չվերանա, հարկավոր է, որ Սփյուռքը ՀՀ աջակցությամբ, շարունակի Հայ դատի ճանաչմանն ուղղված իր գործունեությունը, մասնավորապես՝ Ցեղասպանության միջազգային ճանաչմանն ուղղված քարոզչությունը:

Համառոտ անդրադառնանք Եղեռնի հիմնահարցում արտաքին քարոզչության հարցին: Հայ ցեղասպանագիտության լավագույն նմուշները պետք է կարելվույն չափ թարգմանվեն աշխարհի տարբեր լեզուներով՝ հիմնականում՝ անգլերեն և թուրքերեն: Ըստ որում՝ եթե կատարենք այս նպատակի համար առանձնացվող ֆինանսական և այլ ռեսուրսների պայմանական բաժանում, ապա Սփյուռքը պետք է հովանավորի անգլերեն և այլ լեզուներով գրված հրատարակությունները, իսկ ՀՀ-ը՝ թուրքերեն[1]: Խնդիրն այստեղ առաջնահերթություններն են: Օտար երկրներում բնակվող, ծագումով հայ քաղաքացիները իրենց բարոյական պարտքն են համարում ամեն մեկն իր ապրած երկրում հորդորելու պետական իշխանության օրենսդիր մարմնին՝ ճանաչելու 1915 թ. դեպքերը՝ որպես ցեղասպանություն, իսկ այն երկրներում, որոնք արդեն իսկ ճանաչել են Ցեղասպանությունը, հայ համայնքը իր պարտքն է համարում ամեն ապրիլի 24-ին հիշատակի միջոցառումներ կազմակերպել: Եթե երբևէ ՀՀ ազգային անվտանգության շրջանակներում հրամայական դառնա ՀՀ սահմանների ընդարձակումը մինչև Հայաստանի բնական սահմանները, ապա իր առջև ծառացած է տեսնելու Թուրքիայի Հանրապետության կողմից՝ որպես Ցեղասպանությունն իրականացրած Օսմանյան կայսրության իրավահաջորդի Ցեղասպանության ճանաչման հարցը, ինչպես տեղի ունեցավ հրեաների և Գերմանիայի պարագայում: Այդ նպատակի համար անհրաժեշտ է ուժեղ թյուրքագիտություն, ցեղասպանագիտություն և հետևողական քարոզչական աշխատանք թուրքական վերնախավի և ուսյալ ու միջին խավերի շրջանում՝ մինչև այն մակարդակը, երբ Ցեղասպանության ճանաչումը Թուրքիայի Հանրապետությունում առանձին անհատների մակարդակից, առավել ևս՝ պետականորեն հովանավորվող ֆարսի[2] մակարդակից կբարձրանա

[1] Պատմական փորձը ցույց է տալիս, որ ցեղասպանի ժառանգ լինելը ինքնության լրջագույն ճգնաժամ է առաջացնում թուրք հասարակության լայն շրջաններում, հատկապես՝ շարքային քաղաքացիների մոտ: Հաշվի առնելով, որ ողջ թուրքական պետական համակարգն ու հասարակությունը կառուցված են պետական քարոզչության վրա, անհրաժեշտ է հենց հակաքարոզչությամբ խարխլել վերջինիս հիմքերը:

[2] Այդպիսի ֆարս է «Özür diliyoruz» («Ներողություն ենք հայցում») նախաձեռնությունը, որի կազմակերիպչներից մեկը՝ մշակութային գործիչ, «Սարը գելին» հայկական երգի հայտնի կատարող Յավուզ Բինգյոլը անցյալ տարի պարզորոշ կերպով ասաց. «Մենք ներողության տեքստում «ցեղասպանություն» բառը չենք օգտագործել, և

հոսանքի մակարդակի՝ շոշափելով նաև թուրքական ազգային և պետական էլիտան:

Նույն քարոզչական աշխատանքը ի հարկին կարող է տարվել նաև այլ երկրներում, սակայն այստեղ միջոցները գոնե սկզբնական շրջանում պետք է հատկացվեն գերազանցապես Սփյուռքի «բյուջեից»:

Այսպիսով, ներքին քաղաքականությունում՝

1. եղեռնի հարցը, որպես պատմական եղելություն, պետք է լուսաբանվի այնպես, որ հայության շրջանում չսերմանվի ազգային թերարժեքության բարդույթ և ըստ այդմ՝ պարտվողականություն,
2. կրթադաստիարակչական մակարդակով՝ պետք է ավելի շատ լուսաբանվեն եղեռնի օրերին տեղի ունեցած հերոսամարտերը, հայ վրիժառուների կողմից երիտթուրք պարագլուխների ոչնչացումը՝ որպես ոգեշնչման աղբյուր, և եղեռնի հարցում տարբեր տերությունների շահերն ու հակամետ դիրքորոշումները՝ որպես պատմականորեն ուսանելի դաս,
3. ցեղասպանագիտությունը պետք է հասցվի դասական մակարդակի՝ ամեն պահի «պատրաստ»՝ սպասարկելու արտաքին քաղաքականությանը:

Արտաքին քաղաքականությունում՝

1. ՀՀ-ն պետք է իր ձեռքը վերցնի եղեռնի հարցի շուրջ միջազգային քննարկումների նախաձեռնությունը,
2. Սփյուռքյան համայնքները պետք է գործունեություն ծավալեն իրենց պետությունների սահմաններում,
3. արտասահմանում աշխատող ՀՀ ներկայացուցիչները պետք է ունենան համապատասխան կարգադրություն, թե անհրաժեշտության դեպքում ինչ տեսակետներ պետք է հայտնեն Ցեղասպանության հարցում:

Ցեղասպանության հարցը չպետք է դիտարկվի մեկուսի, լոկ պատմական հարթության մեջ, այլ պետք է մեկընդմիշտ փոխշաղկապվի պատմական անարդարությունը հաղթահարելու և պահանջատիրության գաղափարների հետ՝ մինչև ազատ անկախ և միացյալ Հայաստանի ստեղծումը:

առհասարակ ես չեմ էլ ընդունում և չեմ ընդունի ցեղասպանությունը: Այս ամբողջ միջոցառումը կազմակերպվել էր, որ հարցը դուրս գա միջազգային օրակարգից: Ես էլ միացա և ներողություն խնդրեցի. ներողություն խնդրելը հեշտ գործ է» (**Yavuz Bingöl**: Ben de "Artık bu mesele bitsin" dedim: http://news.am/tur/news/52000.html sitesinde; **Ռ. Մելքոնյան**, Թուրքիայի «Հայկական քաղաքականության» արդի միտումների շուրջ, «Հանրապետական», թիվ 5 (91), 2011, էջք 7-8):

Эдгар Элбакян

ПРОБЛЕМА ГЕНОЦИДА АРМЯН В КОНТЕКСТЕ ВНУТРЕННЕЙ И ВНЕШНЕЙ ПОЛИТКИ РА

В данной работе автор с помощью историко-сравнительного и аналитического методов научного познания определяет место проблемы Геноцида армян в контексте внутренней и внешней политики Республики Армения. Имея ввиду различные социально-психологические и политико-правовые факторы и исторические факты, автор выдвигает идею переосмысления философии истории армян и Армении, нацеленную на поддержку национального достоинства армян. В этом плане Геноцид армян, как историческое явление, должен быть трактован и преподнесен массам крайне объективно, чтобы новое поколение не росло с комплексом национальной неполноценности.

В сфере внешней политики РА должна взять в свои руки право на инициативу обсуждения вопроса Геноцида армян на международной арене. Только таким образом РА сможет добиться возмещений со стороны Республики Турция, как правопреемницей Османской империи – организатора Геноцида армян. Естественным образом появляется объективная необходимость наличия прочной геноцидологии и тюрковедения, как орудия внешней политики.

Edgar Elbakian

THE ARMENIAN GENOCIDE ISSUE IN THE CONTEXT OF THE INTERNAL AND FOREIGN POLICY OF THE RA

In current work, by using different types of scientific research, the author defines the aksiologic and political function of the Armenian Genocide issue within the framework of the RA's foreign and internal policy. Taking into consideration various social, psychological and political factors and certain historical events, the author brings forward the idea of reconsidering and revaluing the philosophy of the Armenian history. From this point of view, the Armenian Genocide, as a historical fact, should be interpreted and delivered to the society in a way, which

will enable preventing the national inferiority complex among the Armenians, especially among new generation.

In the foreign policy field RA should keep the initiative of launching discussions on the Armenian Genocide case in the international realms. By this way only the RA will be able to get contributions from the Repuclic of Turkey, which is the legal successor of the organiser of the Genocide – Ottoman empire.

Subsequently the need in strong Türkology and Genocidology will emerge, as an implement for the foreign policy of the Republic of Armenia.